ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/34-2

ք.Երևան «08» «06» 2018թ.

<<**ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը**>>, գործելով Հայաստանի Հանրապետության անունից,իդեմս**վարչության պետ**Ռ. Հովհաննիսյանի, որըգործումէ վարչության կանոնադրությանհիմանվրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Արֆարմացիա>>ՓԲԸ -ն, ի դեմս տնօրեն Ա.Հովհաննիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողըպարտավորվումէսույնպայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանվածկարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեովԳնորդինմատակարարելպայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկականբնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսվածապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկԳնորդըպարտավորվումէընդունելապրանքըևվճարելդրահամար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ)չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել ենհինգօրից ավելի.

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով,ծավալներով,ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է3 164 340.6(երեք միլիոն հարյուր վաթսունչորս հազար երեք հարյուր քառասուն ամբողջ վեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդըձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվելմինչևպայմանագրով այդժամկետըլրանալը՝Վաճառողիառաջարկությանառկայությանդեպքում,պայմանով, որԳնորդիմոտչիվերացելապրանքիօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայցոչավելքանպայմանագրովսահմանվածժամկետնէ:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարմանհամար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է __12__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն ք. Երևան, Արշակունյաց-63 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011474534 ՀՎՀՀ 02204739 Վարչության պետ՝Ռ. Հովհաննիսյան /ստորագրություն/ Կ.Տ	<<Արֆարմացիա>> ՓԲԸ Ք. Երևան, Ռաֆֆու 111 <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Հ/Հ 163008100220 ՀՎՀՀ 02505735 Տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«08» «06» 2018 թ. կնքված
ՈՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/34-2ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
3	33661140/2 n05aa01/ Ամինազին	քլորպրոմազին <<Զդարովյե Նարոդու>> Ուկրաինա	Քլորպրոմազին (քլորպրոմազինի հիդրոքլորիդ), դեղաձևը՝ լուծույթ ներարկման, դեղաչափը՝ 25մգ/մլ, 2մլ	սրվակ	78.00	39000.00	500	ք.Երևան Արշակունյաց 2	500	3-րդ եռ. – 200 սրվ, 4-րդ եռ. –300 սրվ, ոչ ուշ 15.12.2018թ
14	33661170/3 Պրոկային (պրոկայինիհիդրոքլորիդ) N018A02/ Նովոկային	Պրոկային (պրոկայինիհիդրոքլորիդ), դեղաձևը՝ լուծույթներարկման, դեղաչափը՝ 20մգ/մլ; ամպուլներ 2մլ,	սրվակ	21.84	2184.00	100	ք.Երևան Արշակունյաց 2	100	3-րդ եռ. – 200 սրվ,
17	33671114/1 ամինոֆիլին r03da05/ Էուֆիլին	ամինոֆիլին <<Բորիսով>> Բելոռուս	Ամինոֆիլին, դեղաձևը՝ դեղահատ, դեղաչափը՝150մգ	դեղահատ	3.28	14924.00	4550	ք.Երևան Արշակունյաց 2	4550	3-րդ եռ. -1500 դ/հ 4-րդ եռ. – 3050 դ/հ, ոչ ուշ 15.12.2018թ
18	33671114/2 ամինոֆիլին r03da05/ Էուֆիլին	<<Երևանի քիմ դեղ ֆիրմա>Հայաստան	Ամինոֆիլին, դեղաձևը՝լուծույթներարկման, դեղաչափը՝24մգ/մլ,5մլ	սրվակ	37.3	88401.00	2370	ք.Երևան Արշակունյաց 2	2370	3-րդեռ. – 1000 սրվ, 4-րդեռ.- 1370 սրվ, ոչուշ 15.12.2018թ
33	33671132/1 պրոմեթազին d04aa10, r06ad03/ Պիպոլֆեն	<<Էգիս>> Հունգարիա	պրոմեթազին (պրոմեթազինի հիդրոքլորիդ), դեղաձևը՝լուծույթ/ե և մ/մ ներարկման, դեղաչափը՝	սրվակ	175.10	35020.00	200	ք.Երևան Արշակունյաց 2	200	3-րդ եռ.-100 սրվ 4-րդեռ. –100 սրվ, ոչուշ

				10մգ/մլ, 1մլ							15.12.2018թ
42	33691112/2	մետրոնիդազոլ a01ab17, d06bx01, g01af01, j01xd01, p01ab00	<<Ֆարմատեք>> Հայաստան	Մետրոնիդազոլ, դեղաձևը. լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը.5մգ/մլ,100մլպլաստիկեփաթեթ	հատ	148.00	80660.00	545	ք.Երևան Արշակունյաց 2	545	3-րդ եռ.- 300 հատ, 4-րդ եռ.-245 հատ, ոչ ուշ 15.12.2018թ
51	33691127/2	բենզիլ բենզոատ p03ax01	<<Գրինդեքս >> Լատվիա	Բենզիլ բենզոատ,դեղաձևը. քսուք, դեղաչափը.200մգ/գ, 30գ	հատ	521.00	15630.00	30	ք.Երևան Արշակունյաց 2	30	3-րդ եռ.- 15 հատ 4-րդ եռ.-15 հատ, ոչ ուշ 15.12.2018թ
52	33691129/1	Նատրիումիքլորիդ, կալիումիքլորիդ, կալցիումիքլորիդ (ռինգերի լուծույթ)	<<Ֆարմատեք>> Հայաստան	Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ,կալցիումի քլորիդ, դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը. 8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,49մգ/մլ ,250մլ	հատ	141.80	255240.00	1800	ք.Երևան Արշակունյաց 2	1800	3-րդ եռ. -900 հատ 4-րդ եռ.-900 հատ, ոչ ուշ 15.12.2018թ
53	33691129/2	Նատրիումիքլորիդ, կալիումիքլորիդ, կալցիումիքլորիդ (ռինգերի լուծույթ)	<<Ֆարմատեք>> Հայաստան	Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ,կալցիումի քլորիդ, դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը. 8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,49մգ/մլ ,500մլ	հատ	147.00	198450.00	1350	ք.Երևան Արշակունյաց 2	1350	3-րդ եռ. -750 հատ 4-րդ եռ.-600 հատ, ոչ ուշ 15.12.2018թ
55	33691136/1	Նատրիումի քլորիդ a12ca01, b05cb01, b05xa03	<<Ֆարմատեք>> Հայաստան	Նատրիումի քլորիդ, դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը. 9մգ/մլ,250մլ	հատ	141.80	425400.00	3000	ք.Երևան Արշակունյաց 2	3000	3-րդ եռ. -1350 հատ 4-րդ եռ. -1650 հատ, ոչ ուշ 15.12.2018թ
56	33691136/2	Նատրիումի քլորիդ a12ca01, b05cb01, b05xa03	<<Ֆարմատեք>> Հայաստան	Նատրիումի քլորիդ, դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը. 9մգ/մլ, 500մլ	հատ	147.00	458640.00	3120	ք.Երևան Արշակունյաց 2	3120	3-րդ եռ. -1500 հատ 4-րդ եռ. -1620 հատ, ոչ ուշ 15.12.2018թ
57	33691136/3	Նատրիումի քլորիդ a12ca01, b05cb01, b05xa03	<<Երևանի քիմ դեղ ֆիրմա>Հայաստան	Նատրիումի քլորիդ, դեղաձևը.լուծույթներարկման, դեղաչափը. 9մգ/մլ,5մլ	սրվակ	31.07	93210.00	3000	ք.Երևան Արշակունյաց 2	3000	3-րդ եռ.-1000 սրվ 4-րդ եռ.-2000 սրվ, ոչ ուշ 15.12.2018թ

58	33691136/4	Նատրիումի քլորիդ a12ca01, b05cb01, b05xa03	<<Ֆարմատեք>> Հայաստան	Նատրիումի քլորիդ, դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը. 100մգ/մլ, 50մլ	հատ	504.00	15120.00	30	ք.Երևան Արշակունյաց 2	30	3-րդ եռ.-30 հատ
59	33691136/5	Նատրիումի քլորիդ a12ca01, b05cb01, b05xa03	<<Ֆարմատեք>> Հայաստան	Նատրիումի քլորիդ, դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը. 9մգ/մլ, 100մլ	հատ	141.00	234060.00	1660	ք.Երևան Արշակունյաց 2	1660	3-րդ եռ. –400 հատ 4-րդ եռ.-1260 հատ, ոչուշ 15.12.2018թ
60	33691138/1	գլյուկոզ b05cx01, v04ca02, v06dc01	<<Ֆարմատեք>> Հայաստան	Դեքստրոզ (դեքստրոի մոնոհիդրատ), դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը.50մգ/մլ, 250մլ,	հատ	152.00	334400.00	2200	ք.Երևան Արշակունյաց 2	2200	3-րդ եռ. –900 հատ 4-րդ եռ.-1300 հատ, ոչուշ 15.12.2018թ
61	33691138/2	գլյուկոզ b05cx01, v04ca02, v06dc01	<<Ֆարմատեք>> Հայաստան	Դեքստրոզ (դեքստրոի մոնոհիդրատ), դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը.50մգ/մլ, 500մլ,	հատ	154.00	385000.00	2500	ք.Երևան Արշակունյաց 2	2500	3-րդ եռ. –900 հատ 4-րդ եռ.-1600 հատ, ոչուշ 15.12.2018թ
64	33691144/1	նատրիումի թիոսուլֆատ v03ab06	<<Երևանի քիմ դեղ ֆիրմա>Հայաստան	Նատրիումի թիոսուլֆատ, դեղաձևը.լուծույթն/ներարկման, դեղաչափը. 300մգ/մլ,5մլ	սրվակ	43.56	126759.6	2910	ք.Երևան Արշակունյաց 2	2910	3-րդ եռ. – 1000 սրվ 4-րդ եռ. - 1910 սրվ, ոչ ուշ 15.12.2018թ
65	33691145/1	մագնեզիումի սուլֆատ a06ad04, a12cc02, b05xa05, d11ax05, v04cc02	<<Երևանի քիմ դեղ ֆիրմա>Հայաստան	Մագնեզիումի սուլֆատ, դեղաձևը. լուծույթներարկման, դեղաչափը.250մգ/մլ, 5մլ	սրվակ	31.08	74592.00	2400	ք.Երևան Արշակունյաց 2	2400	3-րդեռ.-1000 սրվ 4-րդեռ. –1400 սրվ, ոչուշ 15.12.2018թ
74	33691186/2	պիրացետամ N06BX03/ Լուցետամ	<<Էգիս>> Հունգարիա	Պիրացետամ, դեղաձևը.դեղահատթաղանթապատ, դեղաչափը.1200մգ	դեղահատ	84.90	127350.00	1500	ք.Երևան Արշակունյաց 2	1500	3-րդեռ.-1000 դ/հ, 4-րդեռ.-500 դ/հ, ոչուշ 15.12.2018թ

75	33691186/3	պիրացետամ N06BX03	<<Բորիսով> > Բելոռուս	Պիրացետամ, դեղաձևը.լուծույթներարկման.դեղաչափը 200մգ/մլ,5մլ	սրվակ	36.50	109500.00	3000	ք.Երևան Արշակունյաց 2	3000	3-րդեռ.-1000 սրվ, 4-րդեռ.-2000 սրվ, ոչուշ 15.12.2018թ
76	33691186/4	պիրացետամ N06BX03/ Լուցետամ	<<Էգիս>> Հունգարիա	Պիրացետամ, դեղաձևը դեղահատթաղանթապատ, դեղաչափը 800մգ	դեղահատ	50.80	50800.00	1000	ք.Երևան Արշակունյաց 2	1000	3-րդեռ.-500 դ/հ, 4-րդեռ.-500 դ/հ, ոչուշ 15.12.2018թ
				Ընդամենը							

Ծանոթություն՝ա. 2.5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին
պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

***Բոլոր ապրանքները պետք է ունենան որակի սերտիֆիկատ և լինեն գործարանային փաթեթավորմամբ՝ եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար:**

*** Բոլոր ապրանքները մատակարարվելու են մատակարարների միջոցներով, ուժերով և հաշվին, յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամկետները նախապես սահմանվում է Գնորդի կողմից՝ համաձայն բաշխման ցուցակի:**

***Բոլոր հղումների դեպքում հասկանալ «կամ համարժեք» արտահայտությունը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին համապատասխան:**

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011474534
ՀՎՀՀ 02204739
Վարչության պետ՝Ռ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Արֆարմացիա>> ՓԲԸ
Ք. Երևան, Ռաֆֆու 111
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 02505735
Տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«08» «06» 2018 թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/34-2ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ապրանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում**				
		1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
3.14.17.18.33.42.51. 52.53.55.56.57.58. 59.60.61.64.65.74. 75.76	**ԴԵՂՈՐԱՅՔ**	-	-	**1 378 959**	**3 164 340.6**	**3 164 340.6**

*Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով: **

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
Ֆն աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739
Վարչության պետ՝Ռ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<<Արֆարմացիա>> ՓԲԸ
Ք. Երևան, Բաֆֆու 111
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 02505735
Տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Դ.Գ.

Հավելված N 3
«08»«06» 2018 թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/34-2ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
_____	ք. Երևան, Արշակունյաց-63
գտնվելուվայրը _____	ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հհ _____	Հ/Հ 900011474534
_____	ՀՎՀՀ 02204739
հվհհ _____	

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՍԻՄԱՍԻԿԱՏԱՐՄԱՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
Պատվիրատուն՝իդեմս _____ և
Պայմանագրիկողմը՝իդեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատակարարել էհետևյալապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	բանակային ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալմատակարարումներիկատարմանվերաբերյալբոլորհաշիվ-ապրանքագրերըհանդիսանումենսույնարձանագրությանբաղկացուցիչմասըևկցվումեն:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«08»«06» 2018 թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԱՊՁԲ-18/34-2ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն